# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 37 - 38 (16636) ՇԱԲԱԹ, 12 ՄԱՅԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Մայիսի 9-ին՝ ֆաշիզմի դեմ հաղթանակի 73-րդ տարելիցի օրը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, երկրի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչները Թբիլիսիի Վակեի զբոսայգում հարգանքի տուրք մատուցեցին Երկրորդ աշխարհամարտի մասնակիցների հիշատակին, ծաղկեպսակներ դրեցին Անհայտ զինվորի գերեզմանին:*

Մեծ հաղթանակի տարեդարձի առթիվ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Թբիլիսիի Վակեի զբոսայգում Պատվո շքանշանով պարգեւատրեց Երկրորդ աշխարհամարտի 100 եւ ավելի տարեկան մասնակիցներին:

Վակեի զբոսայգում, հանդիսավոր արարողության ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիսությանը մասնակից պատերազմի վետերաններին հրավիրեց տոնական ճաշկերույթի: Նա շնորհավորեց բոլորին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի առթիվ, սակայն առանձնահատուկ կերպով շնորհավորեց վետերաններին, քանի որ այդ օրը նրանց է նվիրված:

- Մեր պարտքն է գնահատել նրանց հերոսությունը, մենք պետք է նրանց մեր սրտում պահենք: Նրանք շատ թանկ մարդիկ են մեզ համար, քանի որ իրենց կյանքն են տվել Մայր հայրենիքի համար: Վրաստանը ունեցել է շատ զոհեր: 300 000-ից ավելի մարդիկ չվերադարձան պատերազմից: Նրանց մի մասը հերոսի կոչում են ստացել, մյուսներն անհայտ կորած են: Այսօր մենք պատվում ենք բոլոր նրանց, ովքեր զոհաբերել են իրենց կյանքը մեր երկրի համար: Վրաստանին մաղթում եմ խաղաղություն եւ կայուն զարգացում: Կայունությունը շատ արժեքավոր է, եւ բոլորս պետք է գնահատենք այն,- ասաց վարչապետը:

ՆՇՎԵՑ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՌԱՏՈՆԸ

*Հայ ժողովուրդը մայիսի 9-ին տոնում է Եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 73-րդ տարեդարձը, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման 26-ամյակը:*



Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Երեւանի Հաղթանակի զբոսայգի, որտեղ մասնակցեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 73-րդ տարեդարձի, Շուշիի ազատագրման 26-ամյակի տոնակատարություններին:

Հաղթանակի զբոսայգում տոնական միջոցառումներին ներկա էին նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, ՍԴ նախագահ Հրայր Թովմասյանը, ԱԳ նախարարի պաշտոնակատար Էդվարդ Նալբանդյանը, ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վիգեն Սարգսյանը, ովքեր ծաղիկներ խոնարհեցին Անհայտ զինվորի հուշարձանին:

Հայոց Եռատոնի առիթով, մայիսի 9-ին հանդիսավոր միջոցառումներ անցկացվեցին նաեւ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում: Արցախյան պատերազմի վետերանները, զոհվածների հարազատները, երկրապահները հարգանքի տուրք մատուցեցին իրենց կյանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հերոսների հիշատակին:

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀԱՍՏԱՏՎԵՑ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

*Մայիսի 8-ին անցկացվեց եվրամիությանը Վրաստանի ինտեգրման հարցերով հանձնաժողովի 57-րդ նիստը, որը քննարկեց եւ հավանություն տվեց ինտեգրման գործընթացի ճանապարհային քարտեզի հիմնադրույթներին:*



Հանձնաժողովի նիստում նոր «Լրացուցիչ ինտեգրում՝ նոր հնարավորությունների համար» հայեցակարգը ներկայացրեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն:

Նիստի աշխատանքին մասնակցեց եւ ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, Վրաստանը պատրաստ է անել ավելին, քան դա պահանջում է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը:

- Հաշվի առնելով այդ ամենը՝ մենք ընդունել ենք որոշում՝ մշակել եվրաինտեգրման ճանապարհային քարտեզի հիմնադրույթը, որտեղ ներկայացված են

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ 16-ՐԴ ՎԱՐՉԱՊԵՏ

*Մայիսի 8-ին, Հայաստանի Ազգային ժողովի հատուկ նիստում կայացած անվանական, բաց քվեարկությամբ, «Ելք» խմբակցության ղեկավար, Ազգային ժողովի 35 պատգամավորների կողմից վարչապետի թեկնածու առաջադրված Նիկոլ Փաշինյանը՝ 59 կողմ եւ 42 դեմ ձայներով, ընտրվեց Հայաստանի վարչապետ:*



Նշենք, որ Նիկոլ Փաշինյանն առաջադրվել էր պատգամավորների թվի ավելի քան 1/3-ի՝ 41 պատգամավորի ստորագրությամբ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄՆ Է»




*Մայիսի 5-ին Ախալցիխեում անցկացվեց «Պետության եւ տեղական իշխանության միջեւ ինստիտուցիոնալ երկխոսության առաջին ամենամյա համաժողովը»:*

Համաժողովի աշխատանքին մասնակցեց եւ ելույթ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, կառավարության նպատակն է կրկնապատկել տեղական ինքնակառավարման ֆինանսավորումը, ՀՆԱ-ի համեմատությամբ, առաջիկա տասը տարիների ընթացքում: Գիորգի Կվիրիկաշվիլին, անդրադառնալով տեղական ինքնակառավարմանը, հայտարարեց, որ այն երկրի գործադիր իշխանության գլխավոր առաջնահերթությունն է: Վարչապետի խոսքով, կառավարության գլխավոր խնդիրը երկրի տարբեր տարածաշրջանների կենսամակարդակի հավասարեցնելն է:

- Նրանից հետո, երբ անցանք կարեւոր, արմատական բարեփոխումները, կարծում եմ, որ տեղական ինքնակառավարման բարեփոխումը, անտարակույս, առա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՆԳՆԱԾ Է ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՆ»



Մայիսի 8-ին, Հայաստանի ԱԺ-ում վարչապետի ընտրությունից անմիջապես հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին շնորհավորեց Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Շնորհավորական ուղերձում մասնավորապես ասված է. «Շնորհավորանքներս Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք՝ Ձեր հետագա ջանքերում: Վրաստանը հաստատապես աջակցում եւ կանգնած է եղբայրական Հայաստանի կողքին: Ես հավատում եմ, որ մեր երկրների միջեւ ամուր կապերն ու բարեկամությունը է'լ ավելի կխորանան»:

Ավելի ուշ, մայիսի 11-ին, երկու երկրների վարչապետների միջեւ, հայկական կողմի նախաձեռնությամբ, կայացել է հեռախոսազրույց: Գիորգի Կվիրիկաշվիլին Նիկոլ Փաշինյանին հրավիրել է Վրաստան:

ՎՐԱՍՏԱՆ 12 ՄԱՅԻՍԻ 2018 Թ., № 37 – 38 (16636)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԶԱՐԳԱՆԱՆ»



*Մայիսի 10-ին Հայաստանի նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանը Վրաստանի «Առաջին ալիք» հեռուստաընկերությանը տված բացառիկ հարցազրույցում հայտարարեց, որ իր վրաց գործընկերոջը՝ Գիորգի Կվիրիկաշվիլուն, հրավիրել է Հայաստան, եւ հույս ունի, որ նման հրավեր կստանա նաեւ Վրաստանից:*

Խոսելով Վրաստան-Հայաստան փոխհարաբերությունների մասին, Նիկոլ Փաշինյանը ընդգծեց, որ դրանք անհրաժեշտ է է՛լ ավելի խորացնել: Վրաստանի եւ Հայաստանի փոխհարաբերությունները պետք է չխարխլվեն աշխարհաքաղաքական ազդեցությունների վրա:

- Վրաստանը բարեկամ երկիր է: Վրաստանի եւ Հայաստանի եղբայրական փոխհարաբերությունները պետք է է՛լ ավելի զարգանան, քանի որ մենք եղբայրական երկրներ ենք ու մերձավոր գործընկերներ: Մեր կուսակցության ծրագրում Վրաստանը վճռորոշ դեր ունի Հայաստանի համար:

Կարծում եմ, մեր փոխհարաբերությունները պետք է զերծ մնան աշխարհաքաղաքական ազդեցություններից: Երբեմն, մեր փոխհարաբերությունների վրա իրենց ազդեցությունն են ունենում աշխարհաքաղաքական գործոնները, եւ, ցավոք, այդ գործոնների ազդեցությունը ոչ միշտ է դրական: Երբեմն այն նաեւ բացասական է,- հայտարարեց Նիկոլ Փաշինյանը եւ շարունակեց:

- Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պետք է ձեւավորեն այնպիսի փոխհարաբերություններ, որոնք զերծ կլինեն աշխարհաքաղաքական գործոններից: Կարծում եմ, մենք պետք է ձեւավորենք այնպիսի փոխհարաբերություններ, որոնք զերծ կլինեն աշխարհաքաղաքական գործոններից: Մեր երկրները պետք է ունենան անմիջական երկուստեք փոխհարաբերություններ, եւ պետք է խորացնենք համագործակցությունը բոլոր ոլորտներում՝ ինչպես տնտեսական, այնպես էլ՝ քաղաքական: Պետք է զարգանան փոխհարաբերությունները նաեւ մարդկանց միջեւ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

## «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԿԱՆԽԱԳԾԵՑ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ



*Մայիսի 11-ին Թբիլիսիում, Մթածմինդայի «Անդերվիլեում» անցկացվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության համագումարը:*

Համագումարի պատգամավորները քննարկեցին անցած ժամանակահատվածում կուսակցության ղեկավարության հաշվետվությունը:

Համագումարը քննարկեց կազմակերպչական հարցեր: Մասնավորապես, համագումարը հավանություն վեց կուսակցության քաղխորհրդի անդամների թվի կրճատման, 21-ից մինչեւ 15 անդամի կազմով այն հաստատելու առաջարկությանը: Պատգամավորները հավանություն տվեցին քաղբյուրոյի նոր կազմին:

Համագումարի պատգամավորները միաձայն «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ ընտրեցին Բիձինա Իվանիշվիլուն:

Համագումարի աշխատանքի հանրագումարային խոսքով հանդես եկավ կուսակցության հիմնադիր-ղեկավար Բիձինա Իվանիշվիլին:



ՌՈՒՍԱՍՏԱՆ

### ՊՈՒՏԻՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ

*65-ամյա Վլադիմիր Պուտինը մայիսի 7-ին, չորրորդ անգամ ստանձնեց Ռուսաստանի նախագահի պաշտոնը նոր ժամկետով: Վ.Պուտինը Կրեմլի Մեծ պալատի Անդրեեւյան դահլիճում ընդունեց նախագահական նշանը եւ երդում տվեց:*

*Սա Պուտինի արդեն չորրորդ ժամկետն է պետության ղեկավարի պաշտոնում: Նրա առաջին երկու ժամկետները տեւել են չորսական տարի. Ռուսաստանի սահմանադրության մեջ ուղղումներ մտցնելուց հետո, պետության ղեկավարի մանդատը երկարացվել է մինչեւ վեց տարի:*

*ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի առաջարկությամբ վարչապետի պաշտոնում նշանակվել է Դմիտրի Մեդվեդեւը:*

ԱՄՆ

### ԴՈՒՐՍ ԵԿԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՑ

*- ԱՄՆ-ը դուրս եկավ միջուկային համաձայնագրից,- այս մասին հայտարարեց ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը:*

*Նշենք, որ Իրանի եւ միջազգային վեցյակի (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Չինաստան եւ Ռուսաստան) միջեւ 2015 թվականին ստորագրված համաձայնագրի նպատակն է Թեհրանի կողմից միջուկային ծրագրից հրաժարվելու դիմաց փուլ առ փուլ չեղարկել տնտեսական պատժամիջոցները:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

### ԱՄՆ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԱՊԱՎԻՆԵԼԸ ԱՆՀՆԱՐԻՆ Է

*Մայիսի 10-ին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարեց, որ Եվրոպան պաշտպանության հարցում այլեւս չի կարող ապավինել ԱՄՆ-ին եւ եվրոպական երկրներին կոչ արեց ինքնուրույն տնօրինել իրենց ճակատագիրը:*

*Գերմանիայի կանցլերի հայտարարությունը հնչել է այն բանից հետո, երբ ավելի վաղ Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ը դուրս է գալիս Իրանի հետ գործարքից եւ մտադիր է վերականգնել պատժամիջոցները Թեհրանի նկատմամբ:*

*Դրանից հետո, Գերմանիայի ԱԳ նախարար Հայկո Մաասը հայտարարել է, որ Բեռլինում ընդունում են իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնագրի կարեւորությունը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ՝ աշխարհի համար, եւ կփորձեն պահպանել այն:*

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ



Նաիրի Իրիցյան

Մայիսի 7- ին Ախալքալաքիում անցկացվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության շրջանային հաշվետու ընտրական համաժողովը:

Համաժողովին ներկա էին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Կախա Սամխարաձեն, «Վրացական երազանք» կուսակցության անդամներ Դմիտրի Սամխարաձեն, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, ինչպես նաեւ Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների ղեկավարներ:

Պատգամավորները «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության շրջանային կազմակերպության նախագահ վերընտրեց Ախալքալաքիի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանին:

* * *

Նույն օրը «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության համաժողով անցկացվեց նաեւ Նինոծմինդայում:

Համաժողովին, որին ներկա էին Վրաստանի խորհրդարանի անդամ Հենզել Մկոյանը, Սամցխե-Ջավախեթիի երկրամասային ղեկավարության ներկայացուցիչները, Նինոծմինդայի մունիցիպալիտետի ղեկավարները, ընտրեց տեղի կուսակցական բյուրոյի անդամներին: Համաժողովը կուսակցության շրջանային կազմակերպության ղեկավար վերընտրեց Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» խմբակցության նախագահ Գիորգի Ջմոյանին:



Գիորգի Ջմոյան

**Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում համաժողովի մասնակիցները ընտրեցին նաեւ պատգամավորներ, ովքեր մայիսի 11-ին մասնակցեցին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության համագումարին:**

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀԱՍՏԱՏՎԵԾ ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

այդ ուղղությամբ իրականացվող քայլերը,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ ճանապարհային քարտեզն առավել կնպաստի Եվրամիությանը քաղաքական մերձեցմանը:

- Մեր ռազմավարական նպատակն է դառնալ Եվրամիության լիարժեք անդամ,- ընդգծեց վարչապետը:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կառավարության աշխատակազմը, «Լրացուցիչ ինտեգրում՝ նոր հնարավորությունների համար» խորագրով ճանապարհային քարտի մշակման գործում ներգրավվել են համապատասխան գերատեսչությունները, եւ այն վերջնական տեսքով կներկայացվի մինչեւ տարեվերջ: Ավելի վաղ, Վրաստանի կառավարությունը հաստատել էր ԵՄ ինտեգրման ճանապարհային քարտեզագրման հայեցակարգը, որի քննարկումը հանրային կլինի:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջինն է լինելու առաջիկա բարեփոխումների ցուցակում: Եվ դա պայմանավորված է նրանով, որ մեր գլխավոր խնդիրը տարբեր տարածաշրջանների կենսամակարդակի հավասարեցումն է: Այսօր առկա անհավասարությունը կարեւորագույն մարտահրավերներից մեկն է, եւ բնականաբար, նման բարեփոխումների անցկացումը կպահանջի մարդկային լուրջ ռեսուրս: Բացի այդ, մեր խնդիրն է առաջիկա տասը տարիների ընթացքում, ՀՆԱ-ի համեմատությամբ, կրկնապատկել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորումը, ինչը, բնականաբար, կհանգեցնի տեղական իրավասությունների ընդլայնմանը: Բնականաբար, մենք այսօր ունենք երիտասարդ մարդկային ռեսուրսներ, թեպետ դա քիչ է: Մեր ցանկությունն է, որպեսզի երիտասարդները, ովքեր կրթություն կստանան լավագույն համալսարաններում, նպատակամղված կերպով ծառայեն իրենց երկրամասին, գյուղին, շրջանին: Այդ բարեփոխման արդյունքը կլինի այն, որ տարածաշրջաններում առավել մեծ հնարավորություններ կծագեն այդ երիտասարդներին աշխատանքով ապահովման, նրանց ներուժի օգտագործման ուղղությամբ,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետը ՄԱԿ-ին, Ավստրիայի եւ Շվեյցարիայի դեսպանություններին շնորհակալություն հայտնեց բարեփոխումների իրականացման գործում ցուցաբերած աջակցության համար:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ԾՐԱԳՐՎՈՒՄ Է ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

***Մայիսի 9-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որտեղ քննարկվեցին փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման, դրանց ֆինանսական մատչելիության մակարդակի բարձրացման հետ կապված հարցեր:***



Հանդիպմանը մասնակցեցին Վրաստանի խորհրդարանի, ֆինանսների, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունների, Վրաստանի Ազգային բանկի, Վրաստանի գործընկերային հիմնադրամի եւ բանկային հատվածի, ինչպես նաեւ Թուրքիայից ժամանած պատվիրակության ներկայացուցիչներ:

Աշխատանքային հանդիպման ավարտից հետո, Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ փոքր եւ միջին գործարարության զարգացման եւ նրանց համար ֆինանսական աղբյուրների մատչելիության բարձրացման նպատակով, ծրագրվում է իրականացնել նոր բարեփոխում:

- Վարկային երաշխիքների մեխանիզմը, որի մասին մենք այսօր խոսեցինք, ըստ էության, երաշխիքային հիմնադրամ է, որը կոմերցիոն բանկերի համար ծառայում է որպես փոքր եւ միջին գործարարների կողմից վերցրած վարկերի վերադարձման երաշխիք: Համոզված ենք, որ սույն բարեփոխումը լրացուցիչ ազդակ կհանդիսանա Վրաստանում փոքր եւ միջին գործարարության զարգացմանը, հետեւաբար՝ նաեւ նոր աշխատատեղերի ստեղծմանը,- ընդգծեց Դմիտրի Քումսիշվիլին:



## ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՎԵԼ 3 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

*Ինչպես նշել է «Ռեզոնանսի» թերթը, Վրաստանի էկոնոմիկայում ակնհայտ է դարձել ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը: Տարբեր գործոնների հետ միասին, կապիտալի պակասորդը պայմանավորված է նրանով, որ օտարերկրյա ներդրումներից պետությունը իրատեսական օգուտ չի ստանում: Վերջին յոթ տարվա ընթացքում, Վրաստանից օտարերկրյա ներդրումների տեսքով դուրս է բերվել ավելի քան 2 մլրդ դոլար: Եվ եթե դրան ավելացնենք նաեւ ֆիզիկական անձանց կողմից արտասահմանում իրականացված փոխանցումները, ապա այդ ցուցանիշը կգերազանցի 3 մլրդ դոլարի նշագիծը:*

## ՏԱՔՍՈՒ ՀԱՎԱՍՏԱԳԻ՞Ր՝ ՄԵԿ ՏԱՐԻՆ 50 ԼԱՐԻՈՎ

*Մասնավոր մեքենան՝ որպես տաքսի օգտագործելու թույլատրագրի ստացման համար, վարորդները ենթադրաբար վճարելու են 50-ից մինչեւ 100 լարի: Իսկ ինչ վերաբերում է հավաստագրման ժամկետին, ապա՝ այդ հարցում էլ հստակ մոտեցում չկա:*

*Թբիլիսիի սակրեբուլոյում այդ ուղղությամբ հնարավոր կարգավորումների մասին դեռեւս չեն խոսում: Ինչպես նշեց սակրեբուլոյի տրանսպորտային հարցերի հանձնաժողովի նախագահ Թեդո Իսակաձեն, մանրամասները կհստակեցվեն «օպտիմալ ժամկետներում»:*

*Իր հերթին, տրանսպորտի եւ ճանապարհների ասոցիացիայի ղեկավար Դավիթ Մեսխիշվիլին նշեց, որ, եթե տաքսու վարորդների համար հարկեր սահմանվեն, ապա՝ դա կբարձրացնի սպասարկման որակը:*

## ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՑՆԵԼ

*Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մեքենաների պարտադիր տեխստուգման գործընթացը շատ ծանր կլինի, քանի որ մեքենաների մեծ մասն այն անցնել չի կարողանա:*

*Հիշեցնենք, որ Վրաստանում ավտոմեքենաների տեխնիկական տեսչությունում ներդրվում է աստիճանաբար, սկսած 2018թ. հունվարի 1-ից մինչեւ 2019թ. հունվարի 1-ը: Մասնավորապես, 2018թ. հունվարի 1-ից տեխստուգումը պարտադիր է դարձել իրավաբանական անձանց վրա գրանցված մարդատար, ինչպես նաեւ պետությանը պատկանող ավտոմեքենաների համար: Իսկ 2019թ. հունվարի 1-ից այն պարտադիր կլինի բոլոր մարդատար ավտոմեքենաների համար:*

ԿՐԹԱԿԱՆ




# ՍԿՍՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 10-ին Վրաստանի հանրային դպրոցներում մեկնարկեց առաջին դասարանցիների էլեկտրոնային համընդհանուր գրանցումը: Ստեղծված տեղեկատվության համաձայն, ներկա դրությամբ գրանցվել է 16900 երեխա, դեռեւս ազատ է մնացել 35 հազար տեղ:***

Առաջին դասարանցիների գրանցումն իրականացվում է registration.emis.ge կայքով: Զեւաթղթի լրացումից հետո, առաջին դասարանցուն շնորհվում է անհատական կոդ՝ հետագա նույնականացման համար:

Մայիսի 8-ին մեկնարկեց 2018-2019 ուստարվա համար առաջին դասարանցիների համընդհանուր էլեկտրոնային գրանցումը: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, գրանցումը կանցկացվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հատուկ կայքով (registration.emis.ge) եւ կավարտվի հունիսի 8-ին: Գրանցման երկրորդ փուլում հանրակրթական հաստատություններում հաշվառված աշակերտների գրանցման անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը կիրականացվի հունիսի 11-ից 30-ը ներառյալ:

Եթե գրանցման առաջին եւ երկրորդ փուլերում գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը լրիվությամբ չեն ներկայացվում, ապա գրանցումն ավտոմատորեն չեղյալ է համարվում:

Ինչ վերաբերում է գրանցման երրորդ փուլին, որը կանցկացվի հուլիսի 2-ից 16-ը, նախատեսում է աշակերտների գրանցում դպրոցական բազայում: Այդ ժամանակահատվածում դպրոց պետք է ներկայանան նաեւ այն ծնողները, ովքեր որոշակի բացթողումներ են ունեցել անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամանակ:

Միաժամանակ, կրթության նախարարությունում հայտարարեցին, որ 2018-2019 ուստարվա համար կարող են գրանցվել նաեւ այն երեխաները, ում վեց տարին լրանում է սեպտեմբերի 16-ին եւ 17-ին:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԱԼԲԱՆԴՈՎԻ ՋԱՆՔԵՐՈՎ ԼԻԲԻԱՅՈՒՄ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ՆԱՎԱՍՏԻ Ս.ԿԱԿԱԲԱՁԵՆ

***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, Տրիպոլիում անցկացված դատական նիստը որոշում ընդունեց Վրաստանի քաղաքացի, նավաստի Սոսլան Կակաբաձեի ազատ արձակման մասին:***




Դատարանը նման որոշում ընդունել էր Եգիպտոսում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Նալբանդովի միջնորդությունից հետո:

Նշենք, որ Սոսլան Կակաբաձեն 2015 թվականին սկսեց աշխատել Տոգոյի դրոշի ներքո երթեւեկող նավում: Աշխատանքի անցնելու 12-րդ օրը, նավի անձնակազմը, այդ թվում՝ նաեւ Սոսլան Կակաբաձեն, Լիբիայում հայտնվեցին արգելափակման տակ:

Նշենք, որ ապրիլի 29-ին գրեթե եռամյա ձերբալությունից հետո, Ալեքսանդր Նալբանդովի ջանքերով, ազատ արձակված Սոսլան Կակաբաձեն վերադարձավ հայրենիք:

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԿԱՆԽՈՒՄ

***Ընթացիկ տարվա ապրիլի 26-ից մայիսի 2-ը ներառյալ, «Սարփի», «Կարծախ» եւ «Սադախլո» ավտոմոբիլային մաքսակետերում կանխվել է թմրանյութերի եւ հոգեբուժական նյութերի երկրի տարածք ներկրման փորձը:***



Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները կասկածի հիման վրա իրականացված՝ Վրաստանի, Հայաստանի եւ Իրանի քաղաքացիների ֆիզիկական խուզարկության ժամանակ հայտնաբերել են թմրանյութ (66 հաբ) եւ հոգեբուժական դեղորայք (304 հաբ եւ 600 կապսուլ): Հայտնաբերվել է նաեւ «էքստազի» (չորս հաբ) թմրանյութ:

Գործի հետաքննության համար նյութերն առաքվել են Վրաստանի ՆԳ նախարարության համապատասխան գերատեսչություն:

## ԱՌԳՐԱՎՎԵԼ ԵՆ ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՈՍԿԻ ԵՎ ՍԻԳԱՐԵՏ



Ընթացիկ տարվա մայիսի 4-ին, «Սադախլո» ավտոմոբիլային մաքսային անցակետում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները հայտանաբերել են 11478,08 լարիի արժողության չհայտագրված ոսկյա զարդեր: Մաքսանենգային ապրանքի ընդհանուր քաշը կազմում էր 2175 գրամ: Հայաստանից Վրաստան անցած Ռուսաստանի քաղաքացի Կ.-ն ոսկե զարդերը փաթաթել էր մարմնին: Վրաստանի հարկային օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 11478,08 լարիով:

Նույն օրը վերոնշյալ սահմանային անցակետում մաքսային սպաները բացահայտել են եւս մեկ իրավախախտման փաստ: Հայաստանի քաղաքացի Ա.Ա.-ի մեքենայի խուզարկության ժամանակ մաքսայինները հայտնաբերել են 196 տուփ չհայտագրված սիգարետ: Վրաստանի հարկային օրենսգրքի 289-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն, Ա.Ա.-ին՝ որպես տուգանք, սահմանվել է 1000 լարի, առգրավվել է նաեւ մաքսանենգային ապրանքն ու ավտոմեքենան:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 178

# ԱԿՆԱԾԱՆՔՈՎ ՈՒ ՍԻՐՈՎ՝ ԱՂԱՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԱՌՋԵՎ

*Արդեն 19 տարի է, ինչ Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում, անցկացվում է հայ անվանի գրող, հասարակական գործիչ, մանկավարժ, Թումանյանական «Վերնատան» հիմնադիր անդամ Ղազարոս Աղայանին նվիրված «Աղայանական օրը»:*

*Յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներին, Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղի ղեկավարության, Երեւանի «Բոլնիս-Խաչեն» եւ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունների կազմակերպմամբ, անցկացվում է այս օրը:*



Այս անգամ եւս Ղազարոս Աղայանի (1840-1911թթ.) ծննդավայրում գտնվող հայրական տանը, ուր 1965 թվականից գործում է թանգարան եւ գրադարան, աշխույժ եռուզեռ էր: Թբիլիսիից, Երեւանից, Սամցխե-Ջավախեթիից, Քվեմո Քարթլիից ժամանած հյուրերին սիրով ու ջերմությամբ ընդունեցին խաչենցիները գյուղապետ Երվանդ Մարության գլխավորությամբ, ով պատվախնդրությամբ աչքաթող չի անում օրվա հետ կապված ոչ մի մանրուք: Ներկա հյուրերից ոմանք առաջին անգամ էին այստեղ, ուշի-ուշով ծանոթանում էին թանգարանային նմուշներին:

Տոնական հանդիսությունը մեկնարկեց գրողի կիսանդրուն ծաղիկների խոնարհումով: Բացման խոսքով հանդես եկավ ՎՀԳ «Վերնատուն» միության նախագահի, բանաստեղծ Ժորա Սնխչյանը: Նա արժեւորեց Ղազարոս Աղայան գրող-մանկագրի, մանկավարժի, մայրենի լեզվի նվիրյալի, հայ-վրացական բարեկամության սատարողի տեղն ու դերը մեր իրականության մեջ:

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը կարեւորեց գրողի մեծ ավանդը եւ ողջունեց միջոցառման կազմակերպիչների ցուցաբերած հետեւողական աշխատանքը մեծանուն գրողի եւ նրա ստեղծագործությունների տարածման գործում: Ռուբեն Սադոյանը խաչենցիներին վստահեցրեց, որ դեսպանությունը կանի հնարավոր ամեն ինչ, որպեսզի հայ մեծ մանկագրի տուն-թանգարանն ունենա ավելի բարվոք պայմաններ եւ ավելի ներկայացուցչական տեսք:

Աղայանի հիշատակին մեծարման խոսքեր հնչեցրին Բոլնիսիի մունիցիպալիտետի ծառայութան պետ Մամուկա Մուշկուդիանին, Երեւանի «Բոլնիս-Խաչեն» հայրենակցական միության նախագահ Ավետիք Ոսկանյանը, բոլնիսցի մանկավարժ Զոյա Ռոստոմյանը, տեղի դպրոցի տնօրեն Մեխակ Սարգսյանը, անվանի բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, վերնատունցիներ Սուսաննա Ավետիսյանն ու Արտեմ Կիրակոզովը: Սեփական բանաստեղծությունների ընթերցմամբ հանդես եկան երիտասարդ ստեղծագործողներ Հաբեթնակ Պողոսյանը, Վարոս Տերտերյանն ու Խանում Ավանյանը, ում այստեղ հանձնվեց Վերնատան անդամատոմս:



Գեղարվեստական մասում իրենց կատարումներով ներկայացան Նինոծմինդայից ժամանած «Սայաթ-Նովա» երգի համույթն (ղեկավար՝ Հայաստան Իսպիրյան) ու Ջիգրաշենի «Նաիրի» պարային համույթը (պարուսույց՝ Լուսինե Մզիկյան) եւ Բոլնիս-Խաչեն գյուղի դպրոցի սաները:

Օրը մեկ անգամ եւս փաստում է այն մեծ սերն ու ակնածանքը, որ կա Ղազարոս Աղայան պայծառ անվան շուրջ: Հավատացած ենք, որ երիտասարդ սերունդն այսօր եւ միշտ ուսանելի դասեր կքաղի լուսավոր մարդու, բոլոր ժամանակների համար արդիական գրողի, լուրջ մտավորականի, հասարակական գործչի, հայ դասական գրականության իսկական նահապետի կերպարից:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***
*Մեր հատուկ թղթակից*

ԱՀԱԶԱՆԳ

# ԱՆՀԱՅՏ ԹՄՐԱՆՅՈՒԹԻՑ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ...

## ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐ ԻՐԱՑՆՈՂՆԵՐԻ ԴԵՄ

*Ինչպես տեղեկացրել է «Սպիտակ աղմուկ» հասարակական շարժումը, օրերս Վրաստանում գրանցվել է անհայտ թմրանյութից երիտասարդների մահվան դեպքեր:*



Անցած շաբաթ թբիլիսյան տեխնոակումբ «Բասիանի» տնօրինությունը հայտնել է «Մեֆիդրոն» թմրանյութից մի քանի անչափահասների վերադոզավորման մասին: Ակումբի աշխատակիցների կողմից իրականացված գործողությունների արդյունքում, հաջողվել է նրանց փրկել: Ավելի ուշ, նոր թմրանյութի ի հայտ գալու մասին հայտնել է նաեւ «Սպիտակ աղմուկ» հասարակական կազմակերպությունը: Ավելին, կազմակերպության հավաստմամբ, վերջին օրերին միայն Թբիլիսիում այդ թմրանյութից գրանցվել է մահվան 5 դեպք:

Առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոյի խոսքով, ակումբային եւ մնացած այլ թմրանյութերի միջեւ տարբերություն չկա, եւ դրանցից բոլորը կարող են դառնալ մահվան պատճառ:

- Մեկ անգամ եւս ցանկանում եմ օգտվել առիթից եւ խնդրել՝ որպես քաղաքացի, որպես բժիշկ, որպես առողջապահության ոլորտի ներկայացուցիչ, տարբերություն չկա ակումբային, ժամանցային եւ մնացած թմրանյութերի միջեւ: Ցանկացածի օգտագործումը կարող է ճակատագրական եւ մահվան պատճառ դառնալ: Ուստի, խնդրում եմ, չօգտագործել այդ թույնը: Միակ ճանապարհը սպառման եւ մատակարարման նվազեցումն է, որպեսզի խուսափենք այս աղետից,- հայտարարել է Դավիթ Սերգեենկոն:

Հասարակական կազմակերպության ներկայացուցիչները երկրի խորհրդարանից պահանջում են շտապ օրենսդրական կարգավորումների ընդունում երկրում թմրանյութերի տարածման եւ օգտագործման մասին:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանում թմրանյութերի ազատականացման վերաբերյալ օրենսդրական փաթեթի քննարկումը հետաձգվել է: Օրենսդրական փաթեթը նախ լսումներ է անցնելու խորհրդարանի համապատասխան կոմիտեներում:

- Ակնհայտ է, որ վերջին ժամանակներում ծավալվող իրադարձություններն է'լ ավելի են սրում այդ հարցով արմատականությունը: Առաջացել է բողոքի ուժեղ ալիք: Կարծիքներ կան, իբր թմրանյութերի օգտագործման արդյունքում մահվան դեպքերը պայմանավորված են օրենքի բացակայության հետ, ինչը հեռու է իրականությունից: Նման դիմակայության պայմաններում անհնար է քննարկել օրինանախագիծը եւ մշակել համապատասխան խորհրդատվությունների արդյունքում: Դրա համար ժամանակ է հարկավոր,- հայտարարել է խորհրդարանի փոխխոսնակ Գիա Վոլսկին:

Օպերատիվ հետաքննչական միջոցառումների արդյունքում, Մառնեուլիում եւ Փոնիճալայում ձերբակալվել է առանձնակի խոշոր ծավալների թմրանյութ իրացնող 7 անձ:

Պարզվել է, որ մեղադրյալներն զբաղվում էին թմրանյութերի պարբերական իրացմամբ: Խուզարկության ժամանակ, առգրավվել է խոշոր ծավալի թմրանյութ:

Թբիլիսիում իրականացված օպերատիվ հետաքննչական գործողության արդյունքում, ձերբակալվել է երիտասարդ կին, որից առգրավվել է մեծ քանակությամբ սինթետիկ «Բիո» թմրանյութ:

***ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

ՆՈՐՈՒՅԹ


MAGTI

ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ

ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ, ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

**Օպտիկական – մանրաթելային համացանց**
20 մգ/վրկ փաթեթ

**IP հեռուստատեսություն**
Վերահաթեթավորման գործառույթով – 98 ալիք

**Բջջային հեռախոս**
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի խոսակցություն Մագթիկոմի բջջային ցանցով՝ ընտանիքի 4 անդամների միջև

**Նվեր**
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

ԱԿՑԻԱ
Ավելացրեք ընդամենը 3 լարի և ստացեք ավելի
Համացանցի արագությունը +10 մբ/վրկ (30 մբ/վրկ)
IPTV-ի +1 լրացուցիչ փաթեթը՝ նվեր

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 – բջջային ցանցով,
032 217 00 00 – ֆիքսված ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:
www.magticom.ge